Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի մարտի 26-ի N 02-Ն հրամանի 1-ին կետով հաստատված կարգի 7-րդ կետի 5-րդ ենթակետով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ .

1. Հաստատել 2023 թվականի դեկտեմբերի 14-ին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի <<Անի պարտեզ մանկապարտեզ >>, <<Թոռնիկ Մանուշակ - մսուր մանկապարտեզ>>, <<Երազանք մանկապարտեզ>>, <<Գյումրու մանկիկ - մսուր մանկապարտեզ>>, <<Լիլիթ - մսուր մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար անցկացվելիք մրցույթի մրցութային հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) կազմը՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովի քարտուղար նշանակել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժնի գլխավոր մասնագետ Լիանա Սարգսյանին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հանձնաժողովի անդամներին և քարտուղարին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

13.12.2023

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք. Գյումրի

Հավելված՝
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի
2023 թվականի դեկտեմբերի 13 -ի N 3126 -Լ որոշման

ԿԱԶՄ

2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 14-ԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ <<ԱՆԻ ՊԱՐՏԵԶ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ >>, <<ԹՈՌՆԻԿ ՄԱՆՈՒՇԱԿ - ՄՍՈՒՐ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>>, <<ԵՐԱԶԱՆՔ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>>, <<ԳՅՈՒՄՐՈՒ ՄԱՆԿԻԿ - ՄՍՈՒՐ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>>, <<ԼԻԼԻԹ - ՄՍՈՒՐ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՈՒՆՆԵՐԻ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՑԿԱՑՎԵԼԻՔ ՄՐՑՈՒՅԹԻ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

1. Հարություն Նալբանդյան - ՀՀ Շիրակի մարզպետի խորհրդական,
2. Գնունի Աղաբեկյան - ՀՀ Շիրակի մարզպետի օգնական,
3. Լիլիթ Թովմասյան - ՀՀ Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի մշակույթի և երիտասարդության հարցերի բաժնի պետ,
4. Նաիրա Պողոսյան - ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու անդամ,
5. Մելանյա Մկրտչյան– ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի <<Ծիածան-մսուր մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի մեթոդիստ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

ՔԱՂԱՔԱՑԻ ՍՈՆԻԿ ՍԱՄՍՈՆԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺԻ ԵՆԹԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«13»«դեկտեմբերի» 2023 թվական N 3125 -Ա

1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավար՝ Վարդգես Սամսոնյանս, վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 275-րդ հոդվածով սահմանված կարգով, վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննության նախապատրաստելով, ղեկավարվելով՝ Օրենսգրքի 219[1] հոդվածով, 2023 թվականի դեկտեմբերի 05-ին ժամը՝ 16:00 Գյումրի քաղաքում, դռնբաց վարույթի ընթացքում, Սոնիկ Սամսոնի Մարտիրոսյանի (հասցե՝ ՀՀ Շիրակի մարզ, Անի համայնք, գ. Բագրավան, փողոց 9, տուն 7) բացակայությամբ, օրենսգրքի 277-րդ հոդվածով սահմանված ժամկետների պահպանմամբ, 248-րդ հոդվածով սահմանված սկզբունքներով և 278-279-րդ հոդվածներով սահմանված կարգով քննելով՝ Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի գովազդի, առևտրի և սպասարկման ոլորտի համակարգման բաժնի աշխատակիցների կողմից 2023 թվականի հոկտեմբերի 25-ին կազմած՝ Սոնիկ Սամսոնի Մարտիրոսյանի կողմից օրենսգրքի՝ 162-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտում կատարելու վերաբերյալ արձանագրությունը և կից նյութերը, պարզեցի.

2.ԳՈՐԾԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Հայաստանի Հանրապետության Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի առևտրի և սպասարկման ոլորտի համակարգման բաժնի աշխատակիցներ՝ Մ.Վարդանյան, Ռ.Կարապետյան և Ռ.Պետրոսյան կողմից կազմվել է արձանագրություն՝ այն մասին, որ Սոնիկ Սամսոնի Մարտիրոսյանի կողմից Գյումրի քաղաքի, Պ.Սևակ փողոցում, ոչ սահմանված վայրում առանց թույլտվության իրականացնում է բացօթյա առևտուր, արարք՝ նախատեսված օրենսգրքի 162-րդ հոդվածի 1-ին մասով:

Քաղաքացի՝ Սոնիկ Սամսոնի Մարտիրոսյանը վարչական վարույթի լսումների օրվա, տեղի և ժամի մասին պատշաճ ծանուցվել է, պատշաճ ծանուցումը

ապահովվել է Հայաստանի Հանրապետության ինտերնետով ծանուցման պաշտոնական «Ազդարար» կայքի միջոցով:

Օրենսգրքի 8-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝ վարչական իրավախախտում կատարած անձը ենթակա է պատասխանատվության իրավախախտումը կատարելու ժամանակ և վայրում գործող օրենսդրության հիման վրա:

Օրենսգրքի 162-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ոչ սահմանված տեղերում կամ օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտմամբ առևտուր իրականացնելը կամ ծառայություն մատուցելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի յոթանասունապատիկից մինչև յոթանասունապատիկի չափով՝ առևտրի կամ ծառայությունների մատուցման ընթացքում օգտագործվող և իրավախախտում կատարած անձին կամ երրորդ անձին սեփականության իրավունքով պատկանող առարկաների բռնագրավմամբ կամ առանց դրա:

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ համայնքի ղեկավարը օրենքով սահմանված կարգով հսկողություն է իրականացնում առևտրի և հանրային սննդի ոլորտում:

Ի նկատի ունենալով վերոգրյալը՝ ամբողջությամբ հաստատված եմ համարում այն փաստը, որ Սոնիկ Սամսոնի Մարտիրոսյանը կողմից թույլ է տրվել վարչական իրավախախտում, որը նախատեսված է Օրենսգրքի 162–րդ հոդվածի 1–ին մասով և առկա չէ Օրենսգրքի 247-րդ հոդվածով սահմանված վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը բացառող որևէ հանգամանք:

3.ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Ղեկավարվելով Օրենսգրքի՝ 8-րդ հոդվածի, 23-րդ հոդվածի 2-րդ կետի, 32-րդ, 37-րդ, 281-րդ հոդվածի, 282-րդ հոդվածի 1-ին կետի, 283-րդ, 286-288-րդ, 298-րդ, 305-րդ և 162–րդ հոդվածի 1–ին մասով, «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» օրենքի 3-րդ հոդվածի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 20-րդ, 55-րդ, 58-րդ հոդվածի 1-ին կետով, 59-րդ, 60-րդ, 69-րդ, 70-րդ, 71-րդ հոդվածների դրույթներով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Քաղաքացի՝ Սոնիկ Սամսոնի Մարտիրոսյանին ենթարկել վարչական պատասխանատվության, նշանակելով տուգանք՝ սահմանված նվազագույն աշխատավարձի յոթանասունապատիկի չափով՝ 70 000 (յոթանասուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամի չափով:
2. Պարտավորեցնել քաղաքացի՝ Սոնիկ Սամսոնի Մարտիրոսյանին սույն որոշումը ստանալուց հետո բացառել՝ Գյումրի համայնքի տարածքում՝ ոչ սահմանված վայրում բացօթյա առևտրով զբաղվելը:
3. Որոշման օրինակը եռօրյա ժամկետում ուղարկել քաղաքացի՝ Սոնիկ Սամսոնի Մարտիրոսյանին :

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի՝ Սոնիկ Սամսոնի Մարտիրոսյանին պատշաճ կարգով իրազեկելու պահից:
5. Սույն որոշումը կարող է գանգատարկվել քաղաքացի՝ Սոնիկ Սամսոնի Մարտիրոսյանին կողմից որոշման ուժի մեջ մտնելու օրվանից հետո երկամսյա ժամկետում՝ վարչական, կամ դատական կարգով:
6. Սույն որոշմամբ նշանակված տուգանքը քաղաքացի՝ Սոնիկ Սամսոնի Մարտիրոսյանի կողմից պետք է վճարվի սույն որոշումը նրան հանձնելու օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում՝ Գյումրու համայնքապետարանի թիվ 900 215 301 160 հաշվեհամարին, իսկ այդ որոշումը գանգատարկելու կամ բողոքարկելու դեպքում՝ գանգատը կամ բողոքը առանց բավարարման թողնելու մասին ծանուցման օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում:
7. Տուգանք նշանակելու մասին որոշման հարկադիր կատարումը իրականացվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 88-րդ հոդվածի համաձայն:

13.12.2023

X

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«12» դեկտեմբերի 2023 **թվականի** N 3124-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 20-Ի N 2011-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2022 թվականի սեպտեմբերի 20-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար ստեղծվելիք մրցութային հանձնաժողովներում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմից հանձնաժողովների անդամության թեկնածուների ցուցակը հաստատելու մասին>> N 2011-Լ որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1) 1-ին կետով հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հավելվածում նշված անձանց իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Недействительная подпись

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի 2023

Հավելված՝
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Գյումրի համայնքի
ղեկավարի 2023 թվականի
դեկտեմբերի 12 -ի N 3124 -Լ որոշման
<<Հավելված՝
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Գյումրի համայնքի
ղեկավարի 2022 թվականի
սեպտեմբերի 20 -ի N 2011 -Լ որոշման>>

ՑՈՒՑԱԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՍՏԵՂԾՎԵԼԻՔ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻՑ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԱՆԴԱՄՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ

1. Սամսոնյան Վարդգես – Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի (այսուհետ՝ համայնք) ղեկավար,
2. Սուլթանյան Հայկ – համայնքի ղեկավարի գլխավոր խորհրդական,
3. Ջիլավյան Լենա – համայնքի ղեկավարի խորհրդական (այսուհետ՝ խորհրդական),
4. Անդրիասյան Ռոբերտ - խորհրդական,
5. Բաղալյան Կարեն - Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի (այսուհետ՝ աշխատակազմ) քարտուղար,
6. Թովմասյան Լիլիթ - աշխատակազմի մշակույթի և երիտասարդության հարցերի բաժնի պետ,
7. Ալեքսանյան Շողիկ – աշխատակազմի կրթության բաժնի պետ,
8. Ղազարյան Միխակ – աշխատակազմի ֆիզկուլտուրայի և սպորտի բաժնի պետ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ԷԴԳԱՐ ԱՐԹՈՒՐԻ ԴԱԼԼԱՔՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«12»«դեկտեմբերի» 2023 թվական N 3123 -Ա

1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավար՝ Վարդգես Սամսոնյանս, վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 275-րդ հոդվածով սահմանված կարգով, վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննության նախապատրաստելով, ղեկավարվելով՝ Օրենսգրքի 219[1] հոդվածով, 2023 թվականի օգոստոսի 30-ին-ին ժամը՝ 11:00 Գյումրի քաղաքում, դռնբաց վարույթի ընթացքում, Էդգար Արթուրի Դալլաքյանի (հասցե՝ ՀՀ Շիրակի մարզ, ք . Գյումրի, տնակ 217/283, անձնագիր՝ AV 0524606) ներկայությամբ, օրենսգրքի 277-րդ հոդվածով սահմանված ժամկետների պահպանմամբ, 248-րդ հոդվածով սահմանված սկզբունքներով և 278-279-րդ հոդվածներով սահմանված կարգով քննելով՝ Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի առևտրի և սպասարկման ոլորտի համակարգման բաժնի աշխատակիցների կողմից 2023 թվականի հոկտեմբերի 27-ին կազմած, քաղաքացի Էդգար Արթուրի Դալլաքյանի կողմից օրենսգրքի՝ 169.16-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտում կատարելու վերաբերյալ արձանագրությունը և կից նյութերը, պարզեցի.

2. ԳՈՐԾԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

2023 թվականի հոկտեմբերի 27-ին Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի առևտրի և սպասարկման ոլորտի համակարգման բաժնի աշխատակիցներ՝ Մ. Վարդանյանի, Ռ. Կարապետյանի և Ռ. Պետրոսյանի կողմից կազմվել է արձանագրություն այն մասին, որ Էդգար Արթուրի Դալլաքյանը Գյումրի քաղաքի, Պարույր Սևակ, Մանկավարժական ինստիտուտի հարևանությամբ՝ ոչ սահմանված վայրում իրականացնում է առևտուր:

Էդգար Արթուրի Դալլաքյանը վարչական վարույթի լսումներին հայտնեց, որ արձանագրությունը կազմելու պահից վերացրել է իրավախախտումը, ինչպես՝նաև բացառելու է ոչ սահմանված վայրում առևտուր իրականացնելը:

Օրենսգրքի 33-րդ հոդվածի 1-ին ենթակետի համաձայն՝ վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք է համարվում մեղավորի անկեղծ զղջումը:

Օրենսգրքի 33-րդ հոդվածի 2–րդ ենթակետի համաձայն վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք է համարվում իրավախախտման վնասակար հետևանքները մեղավորի կողմից կանխելը, պատճառված վնասը կամավոր հանձնելը կամ վերացնելը:

3. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 20-րդ, 50-րդ հոդվածի 2-մասի «ա» կետով, 3–րդ մասով, 55-րդ, 58-րդ հոդվածի 1-ին մասով, 59-րդ, 60-րդ, 69-րդ, 70-րդ, 71-րդ, օրենսգրքի 33–րդ հոդվածի 1–ին և 2-րդ ենթակետերով, 282-րդ հոդվածի 2-րդ ենթակետով , 293–րդ հոդվածի 3–րդ ենթակետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Էդգար Արթուրի Դալլաքյանի նկարտմամբ հարուցված վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը կարճել:
2. Էդգար Արթուրի Դալլաքյանին ազատել վարչական պատասխանատվությունից և բավարարվել բանավոր դիտողությամբ:
3. Էդգար Արթուրի Դալլաքյանին իրազեկել հետագայում նմանօրինակ իրավախախտում կատարելու հետևանքների մասին:
4. Որոշման օրինակը երեք օրվա ընթացքում ուղարկել Էդգար Արթուրի Դալլաքյանին:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Էդգար Արթուրի Դալլաքյանին պատշաճ կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:
6. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով, որոշումը ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

12.12.2023

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ
ՔԱՂԱՔԱՑԻ ՎԱՅՐԱԴ ՌԱԶՄԻԿԻ ՄՈՎՍԻՍՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺԻ ԵՆԹԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«12»«դեկտեմբերի» 2023 թվական N 3122 -Ա

1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավար՝ Վարդգես Սամսոնյանս, վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 275-րդ հոդվածով սահմանված կարգով, վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննության նախապատրաստելով, ղեկավարվելով՝ Օրենսգրքի 219[1] հոդվածով, 2023 թվականի դեկտեմբերի 05-ին ժամը՝ 15:50 Գյումրի քաղաքում, դռնբաց վարույթի ընթացքում, Վայրադ Ռազմիկի Մովսիսյանի (հասցե՝ ՀՀ Շիրակի մարզ, ք.Գյումրի, Կ.Հալաբյան 313, բնակարան 16) բացակայությամբ, օրենսգրքի 277-րդ հոդվածով սահմանված ժամկետների պահպանմամբ, 248-րդ հոդվածով սահմանված սկզբունքներով և 278-279-րդ հոդվածներով սահմանված կարգով քննելով՝ Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի գովազդի, առևտրի և սպասարկման ոլորտի համակարգման բաժնի աշխատակիցների կողմից կազմած՝ Վայրադ Մովսիսյանի կողմից օրենսգրքի՝ 162-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտում կատարելու վերաբերյալ արձանագրությունը և կից նյութերը, պարզեցի.

2.ԳՈՐԾԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Հայաստանի Հանրապետության Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի առևտրի և սպասարկման ոլորտի համակարգման բաժնի աշխատակիցներ՝ Ս.Խաչատրյանի, Ա.Խնձրցյանի և Ռ.Կարապետյանի կողմից կազմվել է արձանագրություն՝ այն մասին, որ Վայրադ Ռազմիկի Մովսիսյանի կողմից Գյումրի քաղաքի, Հաղթանակի պողոտայում, ոչ սահմանված վայրում առանց թույլտվության իրականացնում է բացօթյա առևտուր, արարք՝ նախատեսված օրենսգրքի 162-րդ հոդվածի 1-ին մասով:

Քաղաքացի՝ Վայրադ Ռազմիկի Մովսիսյանը վարչական վարույթի լսումների օրվա, տեղի և ժամի մասին պատշաճ ծանուցվել է, պատշաճ ծանուցումը

ապահովվել է Հայաստանի Հանրապետության ինտերնետով ծանուցման պաշտոնական «Ազդարար» կայքի միջոցով:

Օրենսգրքի 8-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝ վարչական իրավախախտում կատարած անձը ենթակա է պատասխանատվության իրավախախտումը կատարելու ժամանակ և վայրում գործող օրենսդրության հիման վրա:

Օրենսգրքի 162-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ոչ սահմանված տեղերում կամ օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտմամբ առևտուր իրականացնելը կամ ծառայություն մատուցելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի յոթանասունապատիկից մինչև հարյուրապատիկի չափով՝ առևտրի կամ ծառայությունների մատուցման ընթացքում օգտագործվող և իրավախախտում կատարած անձին կամ երրորդ անձին սեփականության իրավունքով պատկանող առարկաների բռնագրավմամբ կամ առանց դրա:

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ համայնքի ղեկավարը օրենքով սահմանված կարգով հսկողություն է իրականացնում առևտրի և հանրային սննդի ոլորտում:

Ի նկատի ունենալով վերոգրյալը՝ ամբողջությամբ հաստատված եմ համարում այն փաստը, որ Վայրադ Ռազմիկի Մովսիսյան կողմից թույլ է տրվել վարչական իրավախախտում, որը նախատեսված է Օրենսգրքի 162–րդ հոդվածի 1–ին մասով և առկա չէ Օրենսգրքի 247-րդ հոդվածով սահմանված վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը բացառող որևէ հանգամանք:

3.ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Ղեկավարվելով Օրենսգրքի՝ 8-րդ հոդվածի, 23-րդ հոդվածի 2-րդ կետի, 32-րդ, 37-րդ, 281-րդ հոդվածի, 282-րդ հոդվածի 1-ին կետի, 283-րդ, 286-288-րդ, 298-րդ, 305-րդ և 162–րդ հոդվածի 1–ին մասով, «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» օրենքի 3-րդ հոդվածի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 20-րդ, 55-րդ, 58-րդ հոդվածի 1-ին կետով, 59-րդ, 60-րդ, 69-րդ, 70-րդ, 71-րդ հոդվածների դրույթներով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Քաղաքացի՝ Վայրադ Ռազմիկի Մովսիսյանին ենթարկել վարչական պատասխանատվության, նշանակելով տուգանք՝ սահմանված նվազագույն աշխատավարձի յոթանասունապատիկի չափով՝ 70 000 (յոթանասուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամի չափով:
2. Պարտավորեցնել քաղաքացի՝ Վայրադ Ռազմիկի Մովսիսյանին սույն որոշումը ստանալուց հետո բացառել՝ Գյումրի համայնքի տարածքում՝ ոչ սահմանված վայրում բացօթյա առևտրով զբաղվելը:
3. Որոշման օրինակը եռօրյա ժամկետում ուղարկել քաղաքացի՝ Վայրադ Ռազմիկի Մովսիսյանին :

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի՝ Վայրադ Ռազմիկի Մովսիսյանին պատշաճ կարգով իրազեկելու պահից:
5. Սույն որոշումը կարող է գանգատարկվել քաղաքացի՝ Վայրադ Ռազմիկի Մովսիսյանի կողմից որոշման ուժի մեջ մտնելու օրվանից հետո երկամսյա ժամկետում՝ վարչական, կամ դատական կարգով:
6. Սույն որոշմամբ նշանակված տուգանքը քաղաքացի՝ Վայրադ Ռազմիկի Մովսիսյանի կողմից պետք է վճարվի սույն որոշումը նրան հանձնելու օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում՝ Գյումրու համայնքապետարանի թիվ 900 215 301 160 հաշվեհամարին, իսկ այդ որոշումը գանգատարկելու կամ բողոքարկելու դեպքում՝ գանգատը կամ բողոքը առանց բավարարման թողնելու մասին ծանուցման օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում:
7. Տուգանք նշանակելու մասին որոշման հարկադիր կատարումը իրականացվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 88-րդ հոդվածի համաձայն:

12.12.2023

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«12» դեկտեմբերի 2023 թվականի N 3121-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՄՈՒՍԱՅԵԼՅԱՆ ՓՈՂՈՑ N 38/2 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

Գյումրի քաղաքի Մուսայելյան փողոց N 38/2 հասցեի բնակելի տունը ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանում է քաղաքացիներ Հովհաննես Վլադիմիրի Բաղդասարյանին և Արտեմիս Հովհաննեսի Բաղդասարյանին (հիմք անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 23112023-08-0027 վկայական):

Քաղաքացի Հովհաննես Վլադիմիրի Բաղդասարյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով իրեն և Արտեմիս Հովհաննեսի Բաղդասարյանին պատկանող Գյումրի քաղաքի Մուսայելյան փողոց N 38/2 հասցեի 189,18 (մեկ հարյուր ութսունինը ամբողջ տասնութ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի բնակելի կառուցապատումից բնակավայրերի հասարակական կառուցապատում փոփոխելու և Գյումրի քաղաքի Մուսայելյան փողոց N 38/2 հասցեի բնակելի տան 150,84 (մեկ հարյուր հիսուն ամբողջ ութսունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով նկուղի; 1-ին հարկի 22,98 (քսաներկու ամբողջ իննսունութ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով սենքի; 2-րդ հարկի 141,65 (մեկ հարյուր քառասունմեկ ամբողջ վաթսունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով սենքի նպատակային նշանակությունները բնակելիից հասարակականի, իսկ 1-ին հարկի 22,98 (քսաներկու ամբողջ իննսունութ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով և 2-րդ հարկի 141,65 (մեկ հարյուր քառասունմեկ ամբողջ վաթսունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով սենքերի գործառական նշանակությունները՝ որպես գրասենյակ փոփոխելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ մասով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման 24-րդ կետի 3-րդ ենթակետի, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2002թ. փետրվարի 2-ի թիվ 88 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում շենքերի, շինությունների կամ դրանց մի հատվածի գործառական նշանակությունը փոփոխելու կարգի» և հիմք ընդունելով քաղաքացի Հովհաննես Վլադիմիրի Բաղդասարյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականի նոյեմբերի 24-ին N 25434 թվագրմամբ).

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Գյումրի քաղաքի Մուսայելյան փողոց N 38/2 հասցեի 189,18 (մեկ հարյուր ութսունինը ամբողջ տասնութ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատում գործառնական նշանակությունից փոփոխել բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատում գործառական նշանակության:

2. Փոփոխել Գյումրի քաղաքի Մուսայելյան փողոց N 38/2 հասցեի բնակելի տան 150,84 (մեկ հարյուր հիսուն ամբողջ ութսունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով նկուղի; 1-ին հարկի 22,98 (քսաներկու ամբողջ իննսունութ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով սենքի; 2-րդ հարկի 141,65 (մեկ հարյուր քառասունմեկ ամբողջ վաթսունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով սենքի նպատակային նշանակությունները բնակելիից հասարակականի, իսկ 1-ին հարկի 22,98 (քսաներկու ամբողջ իննսունութ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով և 2-րդ հարկի 141,65 (մեկ հարյուր քառասունմեկ ամբողջ վաթսունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով սենքերի գործառական նշանակությունները՝ որպես գրասենյակ:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում իրավական ակտի ընդունման մասին Հովհաննես Վլադիմիրի Բաղդասարյանին և Արտեմիս Հովհաննեսի Բաղդասարյանին պատշաճ կարգով իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

4. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

12.12.2023

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

2023թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«12» դեկտեմբերի 2023 թվականի N 3120-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 15-Ի ԹԻՎ 2336-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 37-րդ հոդվածի 1-ին կետերի դրույթներով, հիմք ընդունելով քաղաքացի Գայանե Վաղինակի Մուսիկյանի 2023 թվականի դեկտեմբերի 11-ի դիմումը ուղղված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին (համայնքապետարանում մուտքագրված թիվ 26629 թվագրությամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի սեպտեմբերի 15-ի «Խնամակալություն սահմանելու և քաղաքացի Գայանե Վաղինակի Մուսիկյանին իր եղբոր անչափահաս երեխայի՝ Վաղինակ Արտյոմի Մուսիկյանի նկատմամբ խնամակալ նշանակելու վերաբերյալ» թիվ 2336-Ա որոշումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Գայանե Վաղինակի Մուսիկյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

12.12.2023

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«12» դեկտեմբերի 2023 **թվականի** N 3119-Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ԳԵՎՈՐԳ ԱՇՈՏԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ 58,02 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրու համայնքապետարանում 2023 թվականի դեկտեմբերի 06-ին կազմակերպվել է Ն.Ղորղանյան փողոց N 240/2 հասցեով (ծածկագիր 08-001-0749-0105) 58,02 (հիսունութ ամբողջ երկու հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի օտարման աճուրդ:

Քաղաքացի Գևորգ Աշոտի Գրիգորյանը մասնակցելով նշված հողամասի օտարման աճուրդին, վճարելով աճուրդում առաջարկված առավելագույն գինը՝ 2900000 (երկու միլիոն ինը հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ճանաչվել է աճուրդում հաղթող (արձանագրություն N 74):

Հաշվի առնելով վերոգրյալը, համաձայն Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ, 68-րդ, և 70-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության N 286 որոշման 5-րդ բաժնի 22-րդ կետի, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Ն.Ղորղանյան փողոց N 240/2 հասցեով, համայնքային սեփականություն հանդիսացող 158,02 (հիսունութ ամբողջ երկու հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը (ծածկագիր 08-001-0749-0105) սեփականության իրավունքով հանձնել նշված հողամասի օտարման աճուրդում հաղթող ճանաչված Գևորգ Աշոտի Գրիգորյանին բնակելի տուն կառուցելու նպատակով:

2.Հողի առուվաճառքի պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման հետ կապված ծախսերը կատարել քաղաքացի Գևորգ Աշոտի Գրիգորյանի միջոցների հաշվին:

3. Պարտավորեցնել քաղաքացի Գևորգ Աշոտի Գրիգորյանին.
Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման» կարգի համաձայն պատվիրել բնակելի տուն կառուցելու նախագծային փաստաթղթեր, ստանալ շինարարության թույլտվություն և շինարարական աշխատանքների ավարտից հետո, շինարարության ավարտը ներկայացնել փաստագրման:

4. Հողամասն ըստ գործառական նշանակության չօգտագործելու, սահմանված ժամկետում շինարարական աշխատանքներն չիրականացնելու կամ շինարարության ընթացքում չհամաձայնեցված նախագծային շեղումներ թույլ տալու դեպքում կկիրառվեն օրենքով նախատեսված ներգործության միջոցներ և օրենքով սահմանված կարգով հողամասը ետ կվերցվի:

5. «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի համաձայն տվյալ հողամասի հողի հարկը ենթակա է գանձման, ելնելով հողի կադաստրային արժեքից և կադաստրային արժեքի փոփոխման դեպքում այն ենթակա է վերանայման:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Գևորգ Աշոտի Գրիգորյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Недействительная подпись

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

2023 թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ
Հեռ. (+374 312) 2-22-001; Ֆաքս (+374 312) 3-26-0
Էլ. փոստ gyumri@gyumri.ar

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՔԱՂԱՔԱՑԻ ՍՏՅՈՊԱ ՍԱՐԳՍԻ ԱԶԱՏՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«---12---»«---դեկտեմբերի---» 2023 թվական N 3118 – Ա

1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավար Վարդգես Սամսոնյանս 2023 թվականի դեկտեմբերի 12 -ին ժամը 12:10-ին Գյումրի քաղաքում, համայնքապետարանի վարչական շենքում <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի <<բ>> ենթակետի հիմքով հարուցված և իրականացված դռնբաց վարչական վարույթի ընթացքում, քաղաքացի՝ Ստյոպա Սարգսի Ազատյանի (հասցե՝ ք.Գյումրի, Սուդուկյան փ., 247տ.) բացակայությամբ, գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները պարզեցի.

2. ԳՈՐԾԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐ

Քաղաքացի՝ Ստյոպա Սարգսի Ազատյանի անշարժ գույքի հարկի պարտավորությունները Գյումրի համայնքի բյուջեի նկատմամբ առաջացել է անշարժ գույքի 2014-2020թթ. չվճարված հարկից (հիմք՝ ՀՀ Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի բյուջեի եկամուտների հավաքագրման բաժնի կողմից տրամադրված N 724743283037151726 և N 224779694950151838 տեղեկանքը) :

Վճարման ենթակա գումարը 21.07.2023 թվականի դրությամբ կազմել է անշարժ գույքի հարկի գծով ընդամենը՝ 34.830 (երեսունչորս հազար ութ հարյուր երեսուն) և 15.285 (տասնհինգ հազար երկու հարյուր ութսունհինգ) ՀՀ դրամ գումար:

3. ԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:

Համաձայն՝ հարկային օրենսգրքի՝ (այսուհետ՝ Օրենսգիրք) 224-րդ հոդվածի 1-ին մասի՝ անշարժ գույքի հարկը հարկ վճարողներին սեփականության իրավունքով պատկանող հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքի համար սույն բաժնով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության համայնքների բյուջեներ վճարվող տեղական հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեությունից

Օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին մասի՝ անշարժ գույքի հարկ վճարողներ են համարվում կազմակերպություններն ու ֆիզիկական անձինք, բացառությամբ պետական մարմինների, համայնքային կառավարչական հիմնարկների, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի, պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների, ինչպես նաև բազմաբնակարան բնակելի շենքի բնակարանների, ոչ բնակելի տարածքների, բազմաբնակարան բնակելի շենքում տեղակայված՝ հասարակական, արտադրական նշանակության շինությունների, ավտոտնակների (ավտոկայանատեղիների, ավտոհանգրվանների) սեփականատերերին՝ բազմաբնակարան բնակելի շենքի սպասարկման և պահպանման համար անհրաժեշտ (այդ թվում՝ շենքի տակ գտնվող)՝ ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող հողամասի և ընդհանուր օգտագործման տարածքների մասով:

Օրենսգրքի 226-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի <<բ>> ենթակետի համաձայն՝ Օրենսգրքի 46-րդ հոդվածի 6-րդ մասի՝ հարկային պարտավորությունը Օրենսգրքով և վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված վերջնաժամկետներում չկատարվելու կամ մասնակի կատարվելու դեպքում հարկային մարմինը, իսկ տեղական հարկերի ու տեղական վճարների մասով՝ տեղական ինքնակառավարման մարմինը իրավասու են Օրենսգրքի 19-րդ բաժնով սահմանված կարգով ձեռնարկել հարկային պարտավորությունների կատարումն ապահովող միջոցներ: <<Տեղական ինքնակառավարման մասին >> օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն, համայնքի ղեկավարը ֆինանսների բնագավառում իրականացնում է հետևյալ սեփական լիազորությունները.

4)տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարվող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ:

4. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Նկատի ունենալով վերոգրյալը և ղեկավավելով Օրենսգրքի 46-րդ հոդվածի 6-րդ մասի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 28–րդ հոդվածի 1–ին, 4–րդ մասերի, <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Քաղաքացի ՝ Ստյոպա Սարգսի Ազատյանից հօգուտ՝ ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի գանձել՝ 34.830 (երեսունչորս հազար ութ հարյուր երեսուն) և 15.285 (տասնհինգ հազար երկու հարյուր ութսունհինգ) ՀՀ դրամ գումար:
2. Քաղաքացի՝ Ստյոպա Սարգսի Ազատյանին իրազեկել սույն վարչական ակտի ընդունման մասին՝ տրամադրելով սույն որոշման օրինակը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի՝ Ստյոպա Սարգսի Ազատյանին պատշաճ կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:
4. Սույն որոշումը <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով ենթակա է հարկադիր կատարման՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

12.12.2023

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ
ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԱՆԱՀԻՏ ԱՐԻՍՏԱԿԵՍԻ ՍԱՀԱԿՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«12» դեկտեմբերի 2023 թվական N 3117-Ա

1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավար՝ Վարդգես Սամսոնյանս, վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 275-րդ հոդվածով սահմանված կարգով, վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննության նախապատրաստելով, ղեկավարվելով՝ Օրենսգրքի 219[1] հոդվածով, 2023 թվականի դեկտեմբերի 05-ին ժամը՝ 11:30 Գյումրի քաղաքում, դռնբաց վարույթի ընթացքում, Ա/Ձ Անահիտ Արիստակեսի Սահակյանի (հասցե՝ ՀՀ Շիրակի մարզ, ք.Գյումրի, Տեր-Գրիբայեդովի 40, ՀՎՀՀ 57267797) ներկայությամբ, օրենսգրքի 277-րդ հոդվածով սահմանված ժամկետների պահպանմամբ, 248-րդ հոդվածով սահմանված սկզբունքներով և 278-279-րդ հոդվածներով սահմանված կարգով քննելով՝ Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի գովազդի, առևտրի և սպասարկման ոլորտի համակարգման բաժնի աշխատակիցների կողմից 2022 թվականի նոյեմբերի 10-ին կազմած՝ Ա/Ձ Անահիտ Արիստակեսի Սահակյանի կողմից օրենսգրքի՝ 169.16-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտում կատարելու վերաբերյալ արձանագրությունը և կից նյութերը, պարզեցի.

2. ԳՈՐԾԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

2023 թվականի նոյեմբերի 10-ին Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի առևտրի և սպասարկման ոլորտի համակարգման բաժնի աշխատակիցներ՝ Ա.Խնձրցյանի, Մ.Վարդանյանի և Ռ.Կարապետյանի կողմից կազմվել է արձանագրություն՝ այն մասին, որ Ա/Ձ Անահիտ Արիստակեսի Սահակյանը Գյումրի քաղաքի, Տեր-Գրիբայեդովի 40 հասցեում, առանց թույլտվության իրականացնում է ոգելից խմիչքների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակումների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների վաճառք, արարք՝ նախատեսված օրենսգրքի 169.16-րդ հոդվածի 1-ին մասով:

Ա/Ձ Անահիտ Արիստակեսի Սահակյանը վարչական վարույթի լսումներին հայտնեց, որ վարչական իրավախախտումը կատարվել է իր իսկ կողմից, որի համար զղջում է, ինչպես նաև նշեց, սահմանված տեղական տուրքի վճարը մասամբ վճարվել է, իսկ մնացած 52 000 /հիսուներկու հազար/ ՀՀ Դրամ գումարի մասով ստանձնեց պարտավորություն՝ վճարել մինչև 2023 թվականի դեկտեմբերի 20-ը:

Օրենսգրքի 33-րդ հոդվածի 1–ին ենթակետի համաձայն վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք է համարվում մեղավորի անկեղծ զղջումը:

Օրենսգրքի 33-րդ հոդվածի 2–րդ ենթակետի համաձայն վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք է համարվում իրավախախտման վնասակար հետևանքները մեղավորի կողմից կանխելը, պատճառված վնասը կամավոր հանձնելը կամ վերացնելը :

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 20-րդ, 50-րդ հոդվածի 2-մասի «ա» կետով, 3–րդ մասով, 55-րդ, 58-րդ հոդվածի 1-ին մասով, 59-րդ, 60-րդ, 69-րդ, 70-րդ, 71-րդ, օրենսգրքի 33–րդ հոդվածի 1–ին և 2-րդ ենթակետերով, 282-րդ հոդվածի 2-րդ ենթակետով , 293–րդ հոդվածի 3–րդ ենթակետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Ա/Ձ Անահիտ Արիստակեսի Սահակյանի նկատմամբ հարուցված վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը կարճել:
2. Ա/Ձ Անահիտ Արիստակեսի Սահակյանին ազատել վարչական պատասխանատվությունից և բավարարվել բանավոր դիտողությամբ:
3. Անահիտ Արիստակեսի Սահակյանին իրազեկել՝ սահմանված տեղական տուրքը չվճարելու և հետագայում նմանօրինակ իրավախախտում կատարելու հետևանքների մասին:
4. Որոշման օրինակը երեք օրվա ընթացքում ուղարկել Ա/Ձ Անահիտ Արիստակեսի Սահակյանին:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ա/Ձ Անահիտ Արիստակեսի Սահակյանին պատշաճ կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:
6. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով, որոշումը ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

12.12.2023

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ
Հեռ. (+374 312) 2-22-001; Ֆաքս (+374 312) 3-26-0
Էլ. փոստ gyumri@gyumri.ar

ՈՐՈՇՈՒՄ

ՔԱՂԱՔԱՑԻ ՍԵՐԳԵՅ ԽԱՉԻԿԻ ՄԱՐԴՈՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«12» դեկտեմբերի 2023 թվական N 3116 – Ա

1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավար Վարդգես Սամսոնյանս 2023 թվականի դեկտեմբերի 12 -ին ժամը 12:00-ին Գյումրի քաղաքում, համայնքապետարանի վարչական շենքում <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի <<բ>> ենթակետի հիմքով հարուցված և իրականացված դռնբաց վարչական վարույթի ընթացքում, քաղաքացի՝ Սերգեյ Խաչիկի Մարդոյանի (հասցե՝ ք.Գյումրի, Կ.Դեմիրճյան փ., 1/19 տ.) բացակայությամբ, գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները պարզեցի.

2. ԳՈՐԾԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐ

Քաղաքացի՝ Սերգեյ Խաչիկի Մարդոյանի անշարժ գույքի հարկի պարտավորությունները Գյումրի համայնքի բյուջեի նկատմամբ առաջացել է անշարժ գույքի 2014-2020թթ. չվճարված հարկից (հիմք՝ ԱԿ 0565224, ՀԾՀ 1208780492 ՀՀ Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի բյուջեի եկամուտների հավաքագրման բաժնի կողմից տրամադրված N 296830686605124812 և N 796743058761124735 տեղեկանքը) :

Վճարման ենթակա գումարը 18.07.2023 թվականի դրությամբ կազմել է անշարժ գույքի հարկի գծով ընդամենը՝ 142.822 (հարյուր քառասուներկու հազար ութ հարյուր քսաներկու) և 3.706 (երեք հազար յոթ հարյուր վեց) ՀՀ դրամ գումար:

3. ԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:

Համաձայն՝ հարկային օրենսգրքի՝ (այսուհետ՝ Օրենսգիրք) 224-րդ հոդվածի 1-ին մասի՝ անշարժ գույքի հարկը հարկ վճարողներին սեփականության իրավունքով պատկանող հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքի համար սույն բաժնով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության համայնքների բյուջեներ վճարվող տեղական հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեությունից

Օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին մասի՝ անշարժ գույքի հարկ վճարողներ են համարվում կազմակերպություններն ու ֆիզիկական անձինք, բացառությամբ պետական մարմինների, համայնքային կառավարչական հիմնարկների, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի, պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների, ինչպես նաև բազմաբնակարան բնակելի շենքի բնակարանների, ոչ բնակելի տարածքների, բազմաբնակարան բնակելի շենքում տեղակայված՝ հասարակական, արտադրական նշանակության շինությունների, ավտոտնակների (ավտոկայանատեղիների, ավտոհանգրվանների) սեփականատերերին՝ բազմաբնակարան բնակելի շենքի սպասարկման և պահպանման համար անհրաժեշտ (այդ թվում՝ շենքի տակ գտնվող)՝ ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող հողամասի և ընդհանուր օգտագործման տարածքների մասով:

Օրենսգրքի 226-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի <<բ>> ենթակետի համաձայն՝ Օրենսգրքի 46-րդ հոդվածի 6-րդ մասի՝ հարկային պարտավորությունը Օրենսգրքով և վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված վերջնաժամկետներում չկատարվելու կամ մասնակի կատարվելու դեպքում հարկային մարմինը, իսկ տեղական հարկերի ու տեղական վճարների մասով՝ տեղական ինքնակառավարման մարմինը իրավասու են Օրենսգրքի 19-րդ բաժնով սահմանված կարգով ձեռնարկել հարկային պարտավորությունների կատարումն ապահովող միջոցներ: <<Տեղական ինքնակառավարման մասին >> օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն, համայնքի ղեկավարը ֆինանսների բնագավառում իրականացնում է հետևյալ սեփական լիազորությունները.

4)տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարվող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ:

4. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Նկատի ունենալով վերոգրյալը և ղեկավավելով Օրենսգրքի 46-րդ հոդվածի 6-րդ մասի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 28–րդ հոդվածի 1–ին, 4–րդ մասերի, <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Քաղաքացի ՝ Սերգեյ Խաչիկի Մարդոյանից հօգուտ՝ ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի գանձել՝ 142.822 (հարյուր քառասուներկու հազար ութ հարյուր քսաներկու) և 3.706 (երեք հազար յոթ հարյուր վեց) ՀՀ դրամ գումար:
2. Քաղաքացի՝ Սերգեյ Խաչիկի Մարդոյանին իրազեկել սույն վարչական ակտի ընդունման մասին՝ տրամադրելով սույն որոշման օրինակը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի՝ Սերգեյ Խաչիկի Մարդոյանին պատշաճ կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:
4. Սույն որոշումը <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով ենթակա է հարկադիր կատարման՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

12.12.2023

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ
Հեռ. (+374 312) 2-22-001; Ֆաքս (+374 312) 3-26-0
Էլ. փոստ gyumri@gyumri.ar

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՔԱՂԱՔԱՑԻ ԵՐՎԱՆԴ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԲՈՅԱՋՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«12» դեկտեմբերի 2023 թվական N 3115 – Ա

1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավար Վարդգես Սամսոնյանս 2023 թվականի դեկտեմբերի 05 -ին ժամը 11:40-ին Գյումրի քաղաքում, համայնքապետարանի վարչական շենքում <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի <<բ>> ենթակետի հիմքով հարուցված և իրականացված դռնբաց վարչական վարույթի ընթացքում, քաղաքացի Երվանդ Հայրապետի Բոյաջյանի (հասցե՝ ք.Գյումրի, Մուսայելյան փ., 23բն.) բացակայությամբ, գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները պարզեցի.

2. ԳՈՐԾԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐ

Քաղաքացի՝ Երվանդ Հայրապետի Բոյաջյանի անշարժ գույքի հարկի պարտավորությունները Գյումրի համայնքի բյուջեի նկատմամբ առաջացել է անշարժ գույքի 2008-2020թթ. չվճարված հարկից (հիմք՝ ՀՀ Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի բյուջեի եկամուտների հավաքագրման բաժնի կողմից տրամադրված N 224783689099114411 և N 796748127513114457տեղեկանքը) :

Վճարման ենթակա գումարը 15.09.2023 թվականի դրությամբ կազմել է անշարժ գույքի հարկի գծով ընդամենը՝ 36.114 (երեսունվեց հազար մեկ հարյուր տասնչորս) 75.245 (յոթանասունհինգ հազար երկու հարյուր քառասունհինգ) ՀՀ դրամ գումար:

3. ԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:

Համաձայն՝ հարկային օրենսգրքի՝ (այսուհետ՝ Օրենսգիրք) 224-րդ հոդվածի 1-ին մասի՝ անշարժ գույքի հարկը հարկ վճարողներին սեփականության իրավունքով պատկանող հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքի համար սույն բաժնով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության համայնքների բյուջեներ վճարվող տեղական հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեությունից

Օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին մասի՝ անշարժ գույքի հարկ վճարողներ են համարվում կազմակերպություններն ու ֆիզիկական անձինք, բացառությամբ պետական մարմինների, համայնքային կառավարչական հիմնարկների, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի, պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների, ինչպես նաև բազմաբնակարան բնակելի շենքի բնակարանների, ոչ բնակելի տարածքների, բազմաբնակարան բնակելի շենքում տեղակայված՝ հասարակական, արտադրական նշանակության շինությունների, ավտոտնակների (ավտոկայանատեղիների, ավտոհանգրվանների) սեփականատերերին՝ բազմաբնակարան բնակելի շենքի սպասարկման և պահպանման համար անհրաժեշտ (այդ թվում՝ շենքի տակ գտնվող)՝ ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող հողամասի և ընդհանուր օգտագործման տարածքների մասով:

Օրենսգրքի 226-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի <<բ>> ենթակետի համաձայն՝ Օրենսգրքի 46-րդ հոդվածի 6-րդ մասի՝ հարկային պարտավորությունը Օրենսգրքով և վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված վերջնաժամկետներում չկատարվելու կամ մասնակի կատարվելու դեպքում հարկային մարմինը, իսկ տեղական հարկերի ու տեղական վճարների մասով՝ տեղական ինքնակառավարման մարմինը իրավասու են Օրենսգրքի 19-րդ բաժնով սահմանված կարգով ձեռնարկել հարկային պարտավորությունների կատարումն ապահովող միջոցներ: <<Տեղական ինքնակառավարման մասին >> օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն, համայնքի ղեկավարը ֆինանսների բնագավառում իրականացնում է հետևյալ սեփական լիազորությունները.

4)տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարվող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ:

4. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Նկատի ունենալով վերոգրյալը և ղեկավավելով Օրենսգրքի 46-րդ հոդվածի 6-րդ մասի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 28–րդ հոդվածի 1–ին, 4–րդ մասերի, <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Քաղաքացի ՝ Երվանդ Հայրապետի Բոյաջյանից հօգուտ՝ ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի գանձել՝ 36.114 (երեսունվեց հազար մեկ հարյուր տասնչորս) 75.245 (յոթանասունհինգ հազար երկու հարյուր քառասունհինգ) ՀՀ դրամ գումար:
2. Քաղաքացի՝ Երվանդ Հայրապետի Բոյաջյանին իրազեկել սույն վարչական ակտի ընդունման մասին՝ տրամադրելով սույն որոշման օրինակը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի՝ Երվանդ Հայրապետի Բոյաջյանին պատշաճ կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:
4. Սույն որոշումը <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով ենթակա է հարկադիր կատարման՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

ԻՍԿԱԿԱՆԻ ՀԵՏ ՃԻՇՏ Է
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱԿԱՎԱՐ՝ **Կ. ԲԱԴԱԼՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ
«Մ.Ա.Մ.Ա.Ռ.ՈՒ.» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«12» դեկտեմբերի 2023 թվական N 3114 -Ա

1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավար՝ Վարդգես Սամսոնյանս, վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 275-րդ հոդվածով սահմանված կարգով, վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննության նախապատրաստելով, ղեկավարվելով՝ Օրենսգրքի 219[1] հոդվածով, 2023 թվականի դեկտեմբերի 05-ին ժամը՝ 15:25 Գյումրի քաղաքում, դռնբաց վարույթի ընթացքում, «Մ.Ա.Մ.Ա.Ռ.ՈՒ.» ՍՊ ընկերության տնօրեն՝ Հովհաննես Մարգարյանի (հասցե՝ ՀՀ Շիրակի մարզ, ք"Գյումրի, Մայակովսկի 80, ՀՎՀՀ 05524072) ներկայությամբ, օրենսգրքի 277-րդ հոդվածով սահմանված ժամկետների պահպանմամբ, 248-րդ հոդվածով սահմանված սկզբունքներով և 278-279-րդ հոդվածներով սահմանված կարգով քննելով՝ Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի գովազդի, առևտրի և սպասարկման ոլորտի համակարգման բաժնի աշխատակիցների կողմից 2022 թվականի նոյեմբերի 10-ին կազմած՝ «Մ.Ա.Մ.Ա.Ռ.ՈՒ.» ՍՊ ընկերության տնօրեն՝ Հովհաննես Մարգարյանի կողմից օրենսգրքի՝ 169"16-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտում կատարելու վերաբերյալ արձանագրությունը և կից նյութերը, պարզեցի.

2"ԳՈՐԾԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

2023 թվականի նոյեմբերի 10-ին Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի առևտրի և սպասարկման ոլորտի համակարգման բաժնի աշխատակիցներ՝ Ս.Խաչատրյանի, Մ.Վարդանյանի և Ռ.Կարապետյանի կողմից կազմվել է արձանագրություն՝ այն մասին, որ «Մ.Ա.Մ.Ա.Ռ.ՈՒ.» ՍՊ ընկերության տնօրեն՝ Հովհաննես Մարգարյանը Գյումրի քաղաքի, Մայակովսկի 80 հասցեում, առանց թույլտվության իրականացնում է ոգելից խմիչքների կամ

ծխախոտային արտադրատեսակների նմանակումների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների վաճառք, արարք՝ նախատեսված օրենսգրքի 169"16–րդ հոդվածի 1-ին մասով:

«Մ.Ա.Մ.Ա.Ռ.ՈՒ.» ՍՊ ընկերության տնօրեն՝ Հովհաննես Մարգարյանը վարչական վարույթի լսումներին հայտնեց, որ իրավախախտումը կատարվել է իր իսկ կողմից, որի համար զղջում է, ինչպես նաև նշեց, սահմանված տեղական տուրքի վճարից 50 000 /հիսուն հազար/ ՀՀ դրամը վճարվել է, իսկ մնացած 22 000 /քսաներկու հազար/ ՀՀ Դրամ գումարի մասով ստանձնեց պարտավորություն՝ վճարել մինչև 2023 թվականի դեկտեմբերի 20-ը:

Օրենսգրքի 33-րդ հոդվածի 1–ին ենթակետի համաձայն վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք է համարվում մեղավորի անկեղծ զղջումը:

Օրենսգրքի 33-րդ հոդվածի 2–րդ ենթակետի համաձայն վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք է համարվում իրավախախտման վնասակար հետևանքները մեղավորի կողմից կանխելը, պատճառված վնասը կամավոր հանձնելը կամ վերացնելը :

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 20-րդ, 50-րդ հոդվածի 2-մասի «ա» կետով, 3–րդ մասով, 55-րդ, 58-րդ հոդվածի 1-ին մասով, 59-րդ, 60-րդ, 69-րդ, 70-րդ, 71-րդ, օրենսգրքի 33–րդ հոդվածի 1–ին և 2-րդ ենթակետերով, 282-րդ հոդվածի 2-րդ ենթակետով , 293–րդ հոդվածի 3–րդ ենթակետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. «Մ.Ա.Մ.Ա.Ռ.ՈՒ.» ՍՊ ընկերության տնօրեն՝ Հովհաննես Մարգարյանի նկատմամբ հարուցված վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը կարճել:
2. «Մ.Ա.Մ.Ա.Ռ.ՈՒ.» ՍՊ ընկերության տնօրեն՝ Հովհաննես Մարգարյանին ազատել վարչական պատասխանատվությունից և բավարարվել բանավոր դիտողությամբ:
3. «Մ.Ա.Մ.Ա.Ռ.ՈՒ.» ՍՊ ընկերության տնօրեն՝ Հովհաննես Մարգարյանի իրազեկել՝ հետագայում նմանօրինակ իրավախախտում կատարելու հետևանքների մասին:
4. Որոշման օրինակը երեք օրվա ընթացքում ուղարկել «Մ.Ա.Մ.Ա.Ռ.ՈՒ.» ՍՊ ընկերության տնօրեն՝ Հովհաննես Մարգարյանին:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Մ.Ա.Մ.Ա.Ռ.ՈՒ.» ՍՊ ընկերության տնօրեն՝ Հովհաննես Մարգարյանին պատշաճ կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:
6. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով, որոշումը ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

11.12.2023

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
